

# ԵՐԿԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ 2020-2021



ՀԲԸՍ



ՄԱՅՐ ԱՌՈՒ Ա. ԷԶՄԻՆ  
ՀԱՅԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾԱ  
Սիրելի հայրենակիցներ,  
Համայն ժողովրդիս հետ միասին ունի ժողովրդիս  
տարածված հասնվարակն աստիճանով ց  
դժվարությունները հնչյան անգլյալում, այսօր կոչն  
ժողովրդիս ծառայ  
Հայկական Բարեգործական Ընդհանուր  
Ինտերնացիոնալ է կազմակերպել, և  
իստ կողք կողքի, աստիճան է կազմակերպել մեր հա  
նայրենիք գանձանու  
նախ և առաջին հերթին

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



ՀԲԸՄ: ի սկստադ կը փոխանցէ մարդասիրական  
օգնութեան տուփը, Նայաստան, 2020

- 04 Նախագահին Խօսքը**
- 07 Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողով**
- 08 Նիթական Տեղեկագիր 2020-2021**
- 11 Նախաձեռնութիւններ եւ ուղղութիւններ**
  - 12 Պատնէջի վրայ տագնապին ընդառաջ
  - 24 Ծառայելու պատրաստակամութիւն
  - 30 Սեռերու միջեւ հաւասարութեան սատարող նախաձեռնութիւն
- 35 Միատրող կէտեր 2020-2021**
  - 36 91-րդ Ընդհանուր Ժողով
  - 38 Կարեւոր իրադարձութիւններ
  - 38 Խորհրդաժողովներ եւ համաժողովներ
  - 39 Մշակութային ձեռնարկներ
- 41 Հ.Բ.Ը.Մ.-ի ներկայութիւնը ըստ շրջաններու**
  - 42 Հայաստան եւ Արցախ
  - 44 Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկա
  - 46 Եւրոպա
  - 48 Ափրիկէ եւ Միջին Արեւելք
  - 50 Ասիա եւ Աստրալիա
- 51 Հ.Բ.Ը.Մ.-ի Դրոշմակիր Ծրագիրներ եւ Արտադրութիւններ**
  - 52 Կրթութիւն
  - 56 Ընկերային-տնտեսական զարգացում
  - 57 Մշակոյթ
  - 60 Երիտասարդ Արհեստավարժներ
- 63 Հ.Բ.Ը.Մ.-ի Պարգեատրեալներ 2020-2021**
- 65 Հ.Բ.Ը.Մ.-ի Մասնաճիւղեր եւ Շրջանակներ**



Սույն տեղեկագիրը Արեւմտահայերէնով կամ Անգլերէնով  
կարդալու համար թուանշագրեցէք կամ այցելեցէք հետեւեալ յղումը  
[agbu.org/financials](http://agbu.org/financials).



Նշումի արարողություն 2020-ի Արցախի պատերազմին տարի մը ետք, Կորիս, Նաաստան

## Նախագահին Խօսքը:

2020-2021 տարիները պատմութեան մէջ պիտի Նշուին համավարակի յառաջացուցած համաշխարհային տագնապով: Պետութիւններու եւ համայնքներու գերխնդիրներն էին մարդկային կեանքեր փրկելու առաջնահերթութիւնը, տնտեսական վերիվայրումներու դիմագրաւումը եւ առօրեայ կենցաղային Նոր կարգաւորումներուն յարմարելու ճիգը: Ստեղծուած մարտահրաւերները դրսեւորեցին Նաեւ պետութիւններու եւ ղեկավարներու զօրութիւնն ու տկարութիւնները:

Հայ համայնքները բնականաբար գերծ չէին կրնար մնալ ընդհանրական տագնապի հետեւանքներէն: Առաւել, մեր ազգային արդէն կնճռոտ իրականութեան եկան աւելնալու աղիտալի Նոր իրադարձութիւններ, որոնք թէեւ անսպասելի, բայց եւ կանխատեսելի էին յետադարձ հայեացքով: Ինչպէս միշտ, անոնք յատկանշուեցան ողբերգական հետեւանքներով, ինչպէս Նաեւ հերոսական արարքներով:

Նշեալ երկու տարիներուն, երեք ճակատագրական իրադարձութիւններ ծանր հետեւանքներ ունեցան մեր ազգին, հայրենիքին եւ տարբեր համայնքներուն համար: 2020-ի Օգոստոսին, երբ համավարակը անք կը գործէր աշխարհի տարածքին, Պէյրութի Նաահանգիստին մէջ պատահած ահաւոր պայթումը, կը քայքայէր պայթումին

մերձակայքը ապրող մեծ թիւով լիբանանահայերու կեանքերը, որոնք արդէն կենցաղային ծանր պայմաններու տակ կը տուայտէին, տնտեսական տագնապի եւ պետական կառոյցներու անգործունակութեան պատճառով: Ամիս մը ետք, Ազրպէյճանական աներիչ յարձակումը եւ անոր յաջորդող 44-օրեայ Արցախեան երկրորդ պատերազմը, քանդիչ հետեւանքներ ունեցան Հայաստանին եւ հայութեան համար, ի յայտ բերելով Նաեւ միջազգային հանրութեան վերաբերումին եւ Հայկական դիւանագիտական յարաբերութիւններուն որակին վերաբերեալ լրջագոյն խնդիրներ: Աշխարհատարած հայութեան համար ակնյայտ դարձաւ իրարօգնութեան եւ անձնական ուժերուն վստահելու անհրաժեշտութիւնը:

Աշխարհը եւ հայութիւնը պատուհասող ծանրագոյն մարտահրաւերներուն դիմաց, Հ.Բ.Ը.Մ.ի շրջանակները, մասնաճիւղերը եւ կամաւորներու անձնուէր խումբերը, իրենց պատրաստակամութեամբ եւ մարդասիրական ծառայութեան բարձր ոգիով, ցոյց տուին, թէ Միութիւնը պատրաստ էր եւ ատակ, հասնելու արտակարգ կացութիւններու մատնուած համայնքներու աղէտեալ զանգուածներուն, արդիւնատուր ձեւով եւ միաժամանակ:

Հ.Բ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանակը, իր սկաուտական, ուսանողական եւ մարզական խումբերով, բացառիկ

գործունէութիւն ցուցաբերեց աղէտի գօտիին մէջ գտնուող ժողովուրդին կարիքներուն հասնելու ուղղութեամբ, բազմաթիւ այլ կազմակերպութիւններու կողքին, որոնք գետնի վրայ ծաւալուն աշխատանք կը տանէին, ցանկագրելու, գնահատելու եւ կազմակերպելու համար մաքրութեան, նորոգութեան, վերաշինութեան եւ մատակարարումի բազմաթիւ եւ բազմատեսակ ծրագիրներ, ի գործ դնելով տարբեր մարզերու իրենց մասնագիտական եւ արհեստագիտական կարողութիւնները եւ փորձառութիւնը: Միութեան աշխարհատարած շրջանակներուն կողմէ հանգանակուած եւ փութացուած նիւթական օժանդակութիւնը մեծապէս սատարեց օգնութեան աշխատանքներու իրականացումին:

Նոյնպէս, երբ Արցախեան պատերազմը ծայր առաւ 2020-ի Սեպտեմբերին, հայութեան միահամուռ հակազդեցութիւնը, Հայաստանի, Արցախի եւ հայ ժողովուրդի մեկուսացումին յանգող ընդհանուր տրամադրութեան դէմ, ի յայտ եկաւ մարդկային լաւագոյն արժանիքներու դրսեւորումով: Ժողովուրդին

Այս բոլոր նախաձեռնութիւնները որոնք ամփոփուած են ներկայ երկամեայ տեղեկագրին մէջ, լուսարձակի տակ կը բերեն նաեւ Կանանց Հզօրացման ծրագիրը, որ այլ մէկ դրսեւորումն է հայ դիմադրական ոգիին եւ տոկունութեան: 2017-ին մեկնարկուած այս ծրագիրը, շարունակեց մեծնալ եւ ընդարձակուիլ 2018-ին եւ 2019-ին, աւելի եւս զարգանալով 2020-ին եւ 2021-ին: Ծրագրին մասնակցող կանանց հաստատակամութիւնը, շարունակելու եւ ընդարձակելու իրենց գործարարական նախաձեռնութիւնները, մանաւանդ Արցախի պարագային, հակառակ պատերազմին պատճառով ստեղծուած ճգնաժամային իրադրութեան, գերազանցեցին մեր ակնկալութիւնները, հաստատելով անոնց կառչածութիւնը երկրին եւ իրենց յանձնառութիւնը անոր զարգացման եւ բարգաւաճումին:

Երբ յետադարձ ակնարկով կը նայինք 2020-2021 շրջանին, կրնանք վստահութեամբ հաստատել, թէ երբ աշխարհատարած հայութիւնը կը դիմագրաւէր ճակատագրական մարտահրաւէրներու աղիտալի հետեւանքները եւ ծանր յուսախաբութիւնները,

**«Երբ յետադարձ ակնարկով կը նայինք 2020-2021 շրջանին, կրնանք վստահութեամբ հաստատել, թէ երբ աշխարհատարած հայութիւնը կը դիմագրաւէր ճակատագրական մարտահրաւէրներու աղիտալի հետեւանքները եւ ծանր յուսախաբութիւնները, միասնականութեան եւ տոկունութեան յատկանիշները լաւագոյնս կը բնութագրէին այդ երու տարիներու փոթորկոտ իրականութիւնը: Մեր գործակիցներու համաշխարհային ցանցը, համապատասխան, եթէ ոչ աւելի ուժգնութեամբ, պատուով դիմագրաւեց այս ճգնաժամը, ի շահ հայ ժողովուրդին եւ աղիտահար զանգուածներուն»:**

համընդհանուր ճիգերով եւ Միութեան բոլոր կառոյցներուն մասնակցութեամբ իրականացուած դրամահաւաքը, կարելի դարձուց պատերազմի աղիտալի հետեւանքներուն մատնուած ժողովուրդին ֆիզիկական եւ հոգեբանական կարիքներուն հասնելու աշխատանքին լծուած կամաւորներու եւ յանձնախումբերու արդիւնաւոր գործունէութիւնը, նաեւ աշխարհի տարբեր կողմերէն խմբային այցելութիւններու կազմակերպումով, լրատուական եւ հանրային կարծիքը իրազեկելու ուղղուած նախաձեռնութիւններու իրագործումը: Կամաւորներու խումբեր նաեւ փութացին աջակցելու մարդասիրական օգնութեան ճիգերուն, հոգեկան սփոփանք եւ քաջալերանք ցուցաբերելով ծանրագոյն ցնցումներու եւ ճնշուածութեան մատնուած տարեցներու եւ մանուկներու: Կարիքի բերումով ստեղծուած այս նախաձեռնութիւններէն ոմանք, վերածուեցան մնայուն ծրագիրներու:

Այս ծրագիրներէն է Հ.Բ.Ը.Մ.ի Համընդհանուր Օգնութեան Հիմնադրամը որ վճռորոշ դեր կատարեց Լիբանանեան տագնապին եւ Արցախեան պատերազմին պատճառով ծանրագոյն կացութեան մատնուած ընտանիքներու:

միասնականութեան եւ տոկունութեան յատկանիշները լաւագոյնս կը բնութագրէին այդ երու տարիներու փոթորկոտ իրականութիւնը: Մեր գործակիցներու համաշխարհային ցանցը, համապատասխան, եթէ ոչ աւելի ուժգնութեամբ, պատուով դիմագրաւեց այս ճգնաժամը, ի շահ հայ ժողովուրդին եւ աղիտահար զանգուածներուն:



Պերճ Սեդրակեան  
Նախագահ





Ն.Բ.Ը.Մ. ԵԱ Երեանի անդամները անհրաժեշտ իրեր կը բաժնեն տեղահանուած հայերուն, Ստեփանակերտ, 2021:

## Ն.Բ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչական Ժողով

### Նախագահ

Պերճ Սեդրակեան

### Փոխ-Նախագահ

Ժողէֆ Ուղուրլեան

### Գանձապահ

Նազարէթ Ա. Ֆըստըքճեան

### Փոխ-Գանձապահ

Երուանդ Տէմիրճեան

### Ատենադպիր

Սարգիս ճէպէճեան

### Փոխ-Ատենադպիր

Արտա Յարութիւնեան

### Պատուոյ Անդամ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ., Կաթողիկոս Ամենայն Հայոց

### Անդամներ

#### Հայաստան

Վազգէն Եագուպեան

#### Գանատա

Լենա Սարգիսեան

#### Ֆրանսա

Արիս Ադամեան  
Նատիա Գործունեան

#### Զուիցերիա

Վահէ Կապրաշ  
Վարդգէս Գևաճեան

#### Միացեալ Թագաւորութիւն

Առնօ Ադամեան

#### Միացեալ Նահանգներ

Հայկ Արիեան  
Էրիկ Իսրայէլեան  
Արի Լիպարիքեան  
Անի Մանուկեան  
Լորի Մունչէրեան  
Լետն Նազարեան  
Երուանդ Զօրեան

#### Խնամակալներու Խորհուրդ

#### Ատենապետ

Վաչէ Մանուկեան

#### Անդամներ

Էրիկ Իսրայէլեան  
Արմէն Սարգիսեան  
Սէմ Սիմոնեան  
Սիւան Սիւնանեան  
Պերճ Սեդրակեան, *h պաշտօնէ*

# Նիւթական Տեղեկագիր 2020-2021<sup>(1)</sup>

Ամերիկեան Տոլարով

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԱՄԱՆԱԲՈՒԱԾ ԱՄՓՈՓ ՆԱՇՈՒԵՏՈՒԹՅՈՒՆ

	December 31, 2021	December 31, 2020
<b>Գոյք</b>		
<b>Ընթացիկ Գոյք</b>		
Դրամատան մէջ պատրաստ	\$ 33,467,635	\$ 32,920,596
Արժեթուղթեր <sup>(2)</sup> <sup>(3)</sup>	247,834,529	220,736,203
Գանձելի ամանդներ/հաշիւներ	1,634,977	4,579,720
Այլ Գանձելի	4,759,524	5,677,837
Այլ գոյք <sup>(4)</sup>	13,594,995	4,498,589
Անշարժ Կալուածներ տոմարական արժեքով <sup>(5)</sup>	103,764,868	103,420,558
Սարքեր, կարասի եւ այլ գոյքեր՝ զուտ	3,172,608	3,367,804
<b>Գումար Ընթացիկ Գոյքի</b>	<b>\$ 408,229,136</b>	<b>\$ 375,201,307</b>
<b>Պարտականք եւ Զուտ Գոյք</b>		
<b>Պարտականք</b>		
Վճարելի հաշիւներ եւ այլ պարտականք	\$ 9,126,727	\$ 8,360,493
վճարելի պարտաթուղթեր -ընթացիկ եւ երկարաժամ պարտականք	–	791,100
<b>Գումար Պարտականքի</b>	<b>9,126,727</b>	<b>9,151,593</b>
<b>Զուտ Գոյք</b>		
Ոչ պայմանաւորեալ <sup>(6)</sup>	39,376,750	35,739,574
Յատուկ նպատակներու <sup>(7)</sup>	88,329,937	64,959,179
Հիմնադրամներ <sup>(8)</sup>	271,395,722	265,350,961
<b>Գումար Զուտ Գոյքի</b>	<b>399,102,409</b>	<b>366,049,714</b>
<b>Գումար Պարտականքի եւ Զուտ Գոյքի</b>	<b>\$ 408,229,136</b>	<b>\$ 375,201,307</b>

(1) Միութեան 2020 եւ 2021 տարեշրջաններու համադրուած հաշուետուութիւնները կը պարփակեն Միացեալ Նահանգներու Տէլաուերի ընկերակցութեան տուեալները, առաւել շրջանակներու, մասնաճիւղերու եւ դպրոցներու կողմէ ներկայացուած նիւթական տեղեկագրերը:

(2) Արժեթուղթերու շուկայական արժեքը \$278,565,128 էր 12/31/2021ին, եւ \$264,289,318 12/31/2020-էն սկսեալ:

(3) Արժեթուղթերու արժեքի ներդրումներու յաւելումը կը բացատրուի անով, որ արժեթուղթերը լուծարուած եւ վերաշահարկուած են, գոյքերու շահարկման տնօրէնի թելադրութեամբ:

(4) Այլ գոյքի յաւելումը արդիւնք է երրորդ կողմի միջոցաւ ըստ հաշուապահական ընդունուած օրէնքներու շահարկուող գումարներու նկատմամբ Ն.Բ.Ը.Մ.ի հետաքրքրութեան ճանաչումին երբ ինք գլխաւոր շահառուն է անոր:

(5) Վեդդոնական վարչութեան գնահատումով, կալուածներու ներկայ շուկայական արժեքը նկատառելիօրէն անելի բարձր է քան անոնց տոմարական արժեքը՝ որ արձանագրուած է նիւթական տեղեկագրին մէջ:

(6) Ընդհանուր նպատակներու կը նշանակէ ոչ-պայմանաւորեալ:

(7) Յատուկ նպատակներու գոյքերը ժամանակատրայապէս պայմանաւորեալ են յատուկ նպատակներու:

(8) Հիմնադրամները վերջնականապէս պայմանաւորեալ են եւ կ'ընդգրկեն կալուածային գոյքեր:

## ՆԱՇՈՒԱԿԱՆ ԸՆԴԳԾՈՒՄՆԵՐ

### ՆԲԸՄ Նիւթական Տեղեկագիր 10-Ամեայ Բաղդատական Գումարներու

	2021	(ա)%	2020	(բ)%	2010
<b>Ընդհ. Գոյք</b>	\$408,229,136	8.8%	\$375,201,307	13.12%	\$331,670,127
<b>Ընդհ. Մուտք</b>	71,091,215	13.7%	62,551,684	57.04%	39,830,669
<b>Ընդհ. Ելք</b>	45,880,149	-18.5%	56,302,957	32.13%	42,612,748

(ա) Միամեայ % Յաւելում (Նուազում) (բ) 10-ամեայ % Յաւելում (Նուազում)



# Նիւթական Տեղեկագիր 2020-2021<sup>(1)</sup>

Ամերիկեան Տոլարով

ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒԱԾ ԱՄՓՈՓ ՀԱՇՈՒՏՏՈՒԹԻՒՆ - ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021

	General Purpose	Restricted	Total
<b>Հանրային Աջակցութիւն Եւ Եկամուտներ</b>			
<b>Հանրային Աջակցութիւն</b>			
Նուիրատուութիւններ	\$ 8,451,688	\$ 13,967,771	\$ 22,419,459
Յատուկ Ձեռնարկներ Եւ այլ մուտքեր	3,146,921	6,220	3,153,141
	<b>11,598,609</b>	<b>13,973,991</b>	<b>25,572,600</b>
<b>Մուտք</b>			
Շահաբաժին Եւ տոկոս	10,454,132	18,023,402	28,477,534
Կալուածային	1,327,351	4,216	1,331,567
Կրթաթոշակ Եւ այլ դպրոցական մուտքեր	15,709,514	-	15,709,514
	<b>27,490,997</b>	<b>18,027,618</b>	<b>45,518,615</b>
Յատուկ ծրագիրներու յատկացումներու գործադրութիւն	39,089,606	32,001,609	71,091,215
<b>Գումար Հանրային Աջակցութեան Եւ Եկամուտներու</b>	<b>8,234,179</b>	<b>(8,234,179)</b>	<b>-</b>
	<b>47,323,785</b>	<b>23,767,430</b>	<b>71,091,215</b>
<b>Ծրագիրներու Եւ Վարչական Ծախք</b>			
<b>Ծրագիր</b>			
Կրթական	22,926,442	-	22,926,442
Մշակութային	12,859,155	-	12,859,155
Կրօնական	1,433,738	-	1,433,738
Մարդասիրական	4,658,392	-	4,658,392
	<b>41,877,727</b>	<b>-</b>	<b>41,877,727</b>
Վարչական	3,258,234	-	3,258,234
Դրամահաւաքի, Զարգացման Եւ Հանրային Յարաբերութիւններու	744,188	-	744,188
	<b>4,002,422</b>	<b>-</b>	<b>4,002,422</b>
<b>Գումար Ծրագիրներու Եւ Վարչական Ծախսերու</b>	<b>45,880,149</b>	<b>-</b>	<b>45,880,149</b>
<b>Յաւելում (Նուազում) Զուտ Գոյքի Գործառնութիւններէ</b>	<b>1,443,636</b>	<b>23,767,430</b>	<b>25,211,066</b>
Զուտ գոյքի փոխանցում անկախ մարմինի (4)	-	-	-
Օտար դրամանիշի վերածումի շահ (վնաս)	158,252	-	158,252
Ներ-գումարային փոխանցում/ճշգրտում/պայմանաւորում Եւ պայմանաւորումէ ազատում	2,035,288	(3,948,317)	(1,913,029)
<b>Յաւելում (Նուազում) Զուտ Գոյքի</b>	<b>3,637,176</b>	<b>19,819,113</b>	<b>23,456,289</b>
Նախորդ շրջանի ճշգրտում (5)	-	9,596,406	9,596,406
<b>Զուտ Գոյք՝ տարեսկիզբին</b>	<b>35,739,574</b>	<b>330,310,140</b>	<b>366,049,714</b>
<b>Զուտ Գոյք՝ տարեվերջին</b>	<b>\$ 39,376,750</b>	<b>\$ 359,725,659</b>	<b>\$ 399,102,409</b>

(1) Միութեան 2020 Եւ 2021 տարեշրջաններու համադրուած հաշուետուութիւնները կը պարփակեն Միացեալ Նահանգներու Տէլաուերի ընկերակցութեան տուեալները, առաւել շրջանակներու, մասնաճիւղերու Եւ դպրոցներու կողմէ ներկայացուած նիւթական տեղեկագրերը:

(2) Արժէթուղթերու արժեզիւծումը ներդրումներու յաւելումը կը բացատրուի անով, որ արժէթուղթերը լուծարուած Եւ վերաշահարկուած են, գոյքերու շահարկման տնօրէնի թելադրութեամբ:

(3) Մարդասիրական ծախսերը 2020-ին կը ներառեն Արցախի աջակցութիւն

(4) Զուտ գոյքի փոխանցումը արդիւնք է Զուտ Գոյքի մէջ իբր անկախ մարմին Հ.Բ.Ը.Մ. հիմնադրամի ստեղծումին

(5) Այլ գոյքի յաւելումը արդիւնք է երրորդ կողմի միջոցաւ ըստ հաշուապահական ընդունուած օրէնքներու շահարկուող գումարներու նկատմամբ Հ.Բ.Ը.Մ.ի հետաքրքրութեան ճանաչումին երբ ինք գլխաւոր շահառուն է անոր:

# Նիւթական Տեղեկագիր 2020-2021<sup>(1)</sup>

Ամերիկեան Տոլարով

ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱՆՄԲՈՒԱԾ ԱՄՓՈՓ ՀԱՇՈՒՏՈՒԹԻՒՆ - ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020

	General Purpose	Restricted	Total
<b>Հանրային Աջակցութիւն Եւ Եկամուտներ</b>			
<b>Հանրային Աջակցութիւն</b>			
Նուիրատուութիւններ	\$ 7,923,529	\$ 22,541,248	\$ 30,464,777
Յատուկ Ձեռնարկներ Եւ այլ մուտքեր	2,902,795	–	2,902,795
	<b>10,826,324</b>	<b>22,541,248</b>	<b>33,367,572</b>
<b>Մուտք</b>			
Շահաբաժին Եւ տոկոս	9,031,380	3,480,369	12,511,749
Կալուածային	1,331,611	1,560	1,333,171
Կրթաթոշակ Եւ այլ դպրոցական մուտքեր	15,339,192	–	15,339,192
	<b>25,702,183</b>	<b>3,481,929</b>	<b>29,184,112</b>
Յատուկ ծրագիրներու յատկացումներու գործադրութիւն	36,528,507	26,023,177	62,551,684
<b>Գումար Հանրային Աջակցութեան Եւ Եկամուտներու</b>	<b>15,303,395</b>	<b>(15,303,395)</b>	<b>–</b>
	<b>51,831,902</b>	<b>10,719,782</b>	<b>62,551,684</b>
<b>Ծրագիրներու Եւ Վարչական Ծախք</b>			
<b>Ծրագիր</b>			
Կրթական	22,526,095	–	22,526,095
Մշակութային	12,826,121	–	12,826,121
Կրօնական	677,967	–	677,967
Մարդասիրական	15,935,110	–	15,935,110
	<b>51,965,293</b>	<b>–</b>	<b>51,965,293</b>
Վարչական	3,453,192	–	3,453,192
Դրամահաւաքի, Զարգացման Եւ Հանրային Յարաբերութիւններու	884,472	–	884,472
	<b>4,337,664</b>	<b>–</b>	<b>4,337,664</b>
<b>Գումար Ծրագիրներու Եւ Վարչական Ծախսերու</b>	<b>56,302,957</b>	<b>–</b>	<b>56,302,957</b>
<b>Յաւելում (Նուազում) Զուտ Գոյքի Գործառնութիւններէ</b>	<b>(4,471,055)</b>	<b>10,719,782</b>	<b>6,248,727</b>
	(14,035,509)	–	(14,035,509)
	739,270	–	739,270
Միջ-յատկագումարային փոխանցում/ Յատկացումներ Եւ վերականգնում	2,103,651	(2,103,651)	–
<b>Յաւելում (Նուազում) Զուտ Գոյքի</b>	<b>(15,663,643)</b>	<b>8,616,131</b>	<b>(7,047,512)</b>
	–	–	–
<b>Զուտ Գոյք՝ տարեսկիզբին</b>	<b>51,403,217</b>	<b>321,694,009</b>	<b>373,097,226</b>
<b>Զուտ Գոյք՝ տարեվերջին</b>	<b>\$ 35,739,574</b>	<b>\$ 330,310,140</b>	<b>\$ 366,049,714</b>

(1) Միութեան 2020 եւ 2021 տարեշրջաններու համադրուած հաշուետուութիւնները կը պարփակեն Միացեալ Նահանգներու Տէլաուրի ընկերակցութեան տուեալները, առաւել շրջանակներու, մասնաճիւղերու եւ դպրոցներու կողմէ ներկայացուած նիւթական տեղեկագրերը:

(2) Արժեթուղթերու արժեզինով ներդրումներու յաւելումը կը բացատրուի անով, որ արժեթուղթերը լուծարուած եւ վերաշահարկուած են, գոյքերու շահարկման տնօրէնին թելադրութեամբ:

(3) Մարդասիրական ծախսերը 2020-ին կը ներառեն Արցախի աջակցութիւն

(4) Զուտ գոյքի փոխանցումը արդիւնք է Զուտ Գոյքի մէջ իբր անկախ մարմին Ն.Բ.Ը.Մ. հիմնադրամի ստեղծումին

(5) Այլ գոյքի յաւելումը արդիւնք է երրորդ կողմի միջոցաւ ըստ հաշուապահական ընդունուած օրէնքներու շահարկուող գումարներու նկատմամբ Ն.Բ.Ը.Մ.ի հետաքրքրութեան ճանաչումին երբ ինք գլխաւոր շահառուն է անոր:

# Նիւթեր և Ուղղութիւններ 2020-2021

Հ.Բ.Ը.Ս. Փլուկտիվի բացօթեայ տօնավաճառին՝ երեխաները կ'օգնեն Արցախի համար կազմակերպուած դրամահաւաքին:



## ՊԱՏՆԷՇԻ ՎՐԱՅ ՏԱԳՆԱՊԻՆ ԸՆԴԱՌԱՋ



Պաշտպանական իրերու բեռներ կը հասնին Զուարթնոց Օդանավակայան Ն.Բ.Ը.Մ. Հայաստանի միջոցաւ

2020-ը հայութեան համար տագնապալի ժամանակաշրջան մը հանդիսացաւ: Աշխարհատարած համավարակը, Պէյրութի նաւահանգիստի ահաւոր պայթումը եւ Ազրայէճնանի եւ Թուրքիոյ շղթայազերծած դաժան պատերազմը Արցախի դէմ, բոլորը պատահեցան 2020-ին: Աջակցելու համար դժուարութեան մատնուած հազարաւոր հայերու կարիքներուն, Յ.Բ.Ը.Մ.ը նախաձեռնեց երեք տագնապները միաժամանակ դիմագրաւելու աշխատանքներուն, յարափոփոխ կացութիւններու ընդառաջ, կազմակերպելով համապատասխան օգնութեան ծրագիրներ:

2021-ին, յետ-պատերազմեան աղիտալի հետեւանքներու վերացման եւ վերականգնումի աշխատանքները շարունակուեցան, ժողովուրդի տագնապահար զանգուածներուն համար, որոնք կը ճգնէին իրենց կեանքերը վերադասաւորել: Աշխատանքները ընդհանրապէս ուղղուած էին օգնելու, որպէսզի աղէտեալները կարենային վերականգնիլ, հոգեպէս, ֆիզիքապէս եւ տնտեսապէս:

Միութեան տեղական շրջանակներու կամաւոր աշխատողներուն նախաձեռնութեան ոգին եւ արտակարգ կացութիւններու մէջ ցուցաբերած պատասխանատու կեցուածքը հերոսական էր եւ երախտագիտութեամբ կը յիշուի բոլոր անոնց կողմէ որոնք բազմապիսի կարիքներու մատնուած էին այդ օրերուն:

Ամփոփ գիծերու մէջ կը ներկայացնենք այն շարք մը ծաւալուն նախաձեռնութիւնները, որոնք յուսատու եւ փրկարար դեր կատարեցին համատարած տագնապի եւ շփոթի դժուարագոյն իրադրութեան մէջ, հաստատելով հայ ժողովուրդին համար Միութեան վստահելի կռուան մը ըլլալու իրողութիւնը:

## Հ.Բ.Ը.Մ.ի Ուսելիքի Ծրարներու Նախաձեռնութիւն Ըստ Կարիքի (2020-2021)

**1 Հայաստան:** Հ.Բ.Ը.Մ.ի Հայաստանի շրջանակի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինի գործակցութեամբ, Տարեցներու ճաշարաններուն միջոցաւ, Երեւանի եւ Վանաձորի շրջակայքի տարեցներուն անհրաժեշտ ուտեստեղէն մատակարարուեցաւ:

**Արժանութիւն:** Հ.Բ.Ը.Մ.ի Պուլնոս Այրէսի մասնաճիւղը, տաք ճաշեր ապահովեց շրջանին մէջ գործող, կարիքատուներու յատուկ ճաշարանին:

**Լիբանան:** Լիբանանի դրամատուներու եւ տնտեսութեան տագնապին իբր արդիւնք համայնքի կարիքատու դարձած մեծաթիւ անձերուն օգնելու համար, Հ.Բ.Ը.Մ.ի շրջանակը իրայատուկ եւ արդիւնատու սպասարկման միջոցառում մը իրականացուց:

**2 Միացեալ Նահանգներ:** Լոս Անճելըսի մէջ, Հ.Բ.Ը.Մ.ը շաբաթական ուտեստեղէնի 1000 ծրարներ բաշխեց շրջանի կարիքատու ընտանիքներու:

**3 Գանատա:** Մոնթրէալի մասնաճիւղը շաբաթական սննդեղէնի մատակարարում ապահովեց 50 կարիքատու ընտանիքներու, յատուկ ձեռնարկներ կազմակերպեց բաշխումի կեդրոնէն ներս, իսկ Թորոնթոյի մէջ, Հ.Բ.Ը.Մ.ը Համայնքային Ուսելիքի Մատակարարման Կեդրոնին օժանդակեց: Այդ կեդրոնը 250 կարիքատուներու կը հասնի:

**4 Աստրալիա:** Մելպուռնի Հ.Բ.Ը.Մ.ը ուսելիքի կտրոսներ ապահովեց Հայաստան ապաստանած 76 Սուրիահայ ընտանիքներու: Սիտնիի մէջ, արձանագրութիւններ կազմուեցան կարիքատուներու համար եւ համապատասխան ուսելիքի ծրարներ ուղարկուեցան շրջաններուն:

**Սուրիա:** 500 ընտանիքներ հետեւողական կերպով ուսելիքի ծրարներ ստացան:

**Ուրուկուէյ:** Հայկական կազմակերպութիւններու հետ համագործակցութեամբ, կամատուներու կողմէ տուներու մէջ պատրաստուած ուսելիքներ բաշխուեցան:



## Մոնոնդի Մատակարարման Համընդհանուր Նախաձեռնութիւն

Նկատի ունենալով արտակարգ իրավիճակներու, համավարակի եւ տնտեսական դժուարութիւններու բերումով ստեղծուած սննդանիւթերու հասանելիութեան խնդիրները, աշխարհի տարածքին, Հ.Բ.Ը.Մ.ը աննախադէպ տարողութեամբ սննդանիւթերու ապահովման, մթերումի եւ բաշխումի աշխատանքներու ձեռնարկեց, Լոս Անճելըսէն Սիտնի, Մոնթրէալ, Երեւան եւ Պուլնոս Այրէս:

Միութեան սկաուտական եւ երիտասարդական խումբերը ոգի ի բռին աշխատեցան սննդեղէնի մատակարարման տարբեր նախաձեռնութիւններով, ուտեստեղէնի ծրարներու պատրաստութեան, բաշխումի, հանգանակութեան, ճաշարաններու հետ համագործակցութեամբ տաք ճաշերու մատակարարումի եւ այլ նախաձեռնութիւններով:



# Համայնքներու Միջեւ Հաղորդակցական Կապերու Ապահովում

## 5 Հայկական Նեոավար Համալսարանի (Հ.Ն.Ն.) Ուսուցման Ծրագիրը

Երբ համավարակին պատճառով շատեր արգելափակուած էին իրենց տուներուն մէջ, Զ.Բ.Բ.ը 20-օրեայ առջանց ուսուցման ծրագիր մը մշակեց եւ ծրագրեց տրամադրեց, առօրեայ դասընթացքներով, առջանց գրոյց-հանդիպումներով եւ շրջապատյոյտներով: Այդ շրջանին Զ.Բ.Բ.ի ընթացիկ ծրագիրներուն անդամակցողներու թիւը եռապատկուեցաւ հասնելով աւելի քան 1000 օգտուողի: Բացի այդ, երկամսայ ժամանակաշրջանին Զ.Բ.Բ.ի սովորական դասերու ընդգրկումը երեք անգամ աւելցաւ՝ որով անոնք առիթը ունեցան ինքնուրոյնաբար սորվելու հայոց լեզուն, պատմութիւնը եւ մշակոյթը, կամ խումբով ամառային դասընթացը:

## Երիտասարդ Արհեստավարժներու Թոայնական Ծրագիրներ


Անձամբ հանդիպումներու սահմանափակումները շրջանցելու նպատակով, աշխարհի տարածքին երիտասարդ Արհեստավարժներու 37 խումբերը, առջանց նորարար նախաձեռնութիւններով աշխոյժ պահեցին իրենց կապերը, կազմակերպելով ձիրքերու յայտնաբերման շարք մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Պոստոնէն, Պուէնտո Այրէսէն, Զիուսթընէն եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններէն Երիտասարդ Արհեստավարժներու խումբեր, յատուկ յայտագիրներով: Այլազան ծրագիրներու հարուստ շարք մը, հաղորդակցութեան մէջ պահեց տարբեր շրջանակներէ մասնակիցներու մեծաթիւ խումբեր, Նիւ Զելանտէն, Զարաւային Զորէսէն, եւ Ռուսիայէն: Շուրջ 1200 աշխոյժ մասնակիցներ միացան յայտագիրներուն, նոր հետեւորդներու յաւելումով:

## Ցուցասրահներու Առջանց Այցելութիւններ

**Սաու Փաուլօի** շրջանակը նախաձեռնեց ցուցասրահներու առջանց այցելութիւններու շարքի մը, որուն մաս կազմեցին Զայաստանի Պատմութեան եւ Արամ Խաչատուրեանի Թանգարանները, ինչպէս նաեւ Արեւելեան Գորգերու ցուցասրահ մը:

## Անցում Առջանց Հաղորդակցութիւններու Միջոցառումին

Երբ համավարակի պատճառով դպրոցներ եւ գրասենեակներ տնային արգելափակման տարբերակը որդեգրեցին, Զ.Բ.Բ.ը անցում կատարեց ամբողջովին առջանց գործելակերպին: Միութեան Կեդրոնական Գրասենեակը փակուեցաւ 16 Մարտ 2020-ին եւ նուազ քան մէկ շաբթուան ընթացքին բոլոր պաշտօնէութիւնը արդէն սահուն փոխանցում կատարեց առջանց աշխատանքային գործելակերպին: Շրջանակները եւ մասնաճիւղերը նոյնպէս հետեւեցան նոյն աշխատելաձեւին եւ մէկ ամսուան ընթացքին Միութեան համաշխարհային ցանցը ամբողջական թափով անցաւ առջանց հաղորդակցութեան: Շնորհիւ պաշտօնէութեան եւ անդամակցութեան հաւատարմութեան ոգիին եւ նուիրումին, մինչեւ 2021-ի ամարտը, միութեանական բոլոր մարզերու գործունէութիւնները առջանց բնոյթով իրագործուեցան կատարեալ արդիւնաւորութեամբ:



Այլ բոլոր մարզերու կազմակերպչական եւ արդիւնաբերական գործունէութիւնը պահպանելու ընդհանուր ճիգերուն համահունչ, Կարիքի պարտադրանքով որդեգրուած առջանց միջոցառումը, շուտով վերածուեցաւ արդիւնաւոր գործելակերպի, ընդարձակելով շրջանակներու միջեւ հաղորդակցութիւնը եւ եւ հասողութիւնը, գործադրող յայտագիրները հասանելի դարձնելով մինչեւ հեռաւոր ափեր, բազմապատկելով նաեւ մշակութային, ուսուցողական եւ կատարողական տարբեր ձեռնարկներուն մասնակցողներու թիւը, սատարելով համընդհանուր միասնականութեան ոգիին:

## Հ.Բ.Բ.ի Նեոավար Դպրոցներ

Վարակի դէմ նախագոյնութեան համար կրթական կառոյցներու եւ հաստատութիւններու կողմէ հեռավար միջոցառումներու որդեգրման կապակցութեամբ, Զ.Բ.Բ.ի դպրոցները առաջիններէն էին որոնք իրենց արդէն իսկ օգտագործող ճարտարագիտական կարելիութիւնները իր գործ դրին, իրենց աշակերտութեան տրամադրելով նաեւ համապատասխան միջոցներ, դասաւանդութիւնները բոլորովին կամ մասամբ առջանց դրութեամբ եւ անարգել շարունակելու համար: Զայկական Զեռավար Զամալսարանի հարթակը նոյնպէս մեծապէս սատարեց այս աշխատանքներուն, տրամադրելով իր առջանց ուսուցման ծրագիրները լեզուի, պատմութեան եւ մշակոյթի բնագաւառներուն մէջ: Տրամադրելի էին նաեւ Զ.Բ.Բ.ի թոայնական գրադարանի եւ առջանց մասնագիտական հարցազրոյցներու շարքը: Զ.Բ.Բ.ի Արեւմտեան Շրջանի *Յաջորդ Սերունդ Պատանիներու Խորհրդատուական Ծրագիրը* նոյնպէս որդեգրեց առջանց գործելակերպը, շարունակելով դպրոցական տարիքի պատանիները ընկերային ժխտական հակումներէ հեռու պահելու ուղղութեամբ իր կենսական ծառայութիւնները:

## Հ.Բ.Բ.ի Վերափոխուած Ամառնային Ճամբարները

Զ.Բ.Բ.ի ամառնային ճամբարները որոնք համավարակի պատճառով փակ մնացին 2020-ին, յաջորդ տարի վերսկսան իրենց գործունէութիւնը վարակի դէմ նախագոյնական խիստ միջոցառումներով: Միութեան հռչակաւոր Նուպար ճամբարը, ֆիզիքապէս փակ մնալով հանդերձ 2020-ի եղանակին, ձեռնարկեց շարք մը հետաքրքրական առջանց ծրագիրներու, առօրեայ զանազան գործունէութիւններով, որոնք կ'ընդգրկէին ուսուցում՝ լեզուի, մշակոյթի եւ ձեռարուեստի նիւթերով, ընկերային առջանց խաղերով, ճաշի պատրաստութեան, ընդհանուր զարգացման գիտելիքներու

մրցումներով, որոնք կը վարչին ճամբարի ղեկավարները, մեծ թիով պատանիներու խանդավառ մասնակցութեամբ, Հայաստանէն, Գանատայէն, Թուրքիայէն, Արաբական Միացեալ Էմիրութիւններէն, եւ Միացեալ Նահանգներէն: 2021-ին ճամբարը գործեց սահմանափակ թիւերով, Նախագահութեան խիստ միջոցառումներով եւ կարճեցուած ժամանակացոյցով:

Պուկարիոյ մէջ, Փլովտիի եւ Սոֆիայի Հայլեր ճամբարը փոխարինուեցաւ միօրեայ շրջայցերով: Ուրիշներու պարագային, ինչպէս Սոնթրէալի Հայորդեայց Ամառնային ճամբար-ը, Լոս Անճելըսի Ամառա ճամբար-ը եւ Լիբանանի Տէմիրճեան Կեդրոնի Ամառնային Միօրեայ ճամբար-ը, գործեցին զգուշաւորութեան միջոցառումներով, առաւելաբար բացօդեայ ծրագիրներով: Ֆրանսայի Հոթ Սալուայի Քոլոնի Տը Վաքանս-ը սահմանափակ թիով մասնակիցներ ընդունեց եւ ապահովական ու առողջապահական խիստ զգուշաւորութեան միջոցառումներով իրականացուց իր ծրագիրը, միաժամանակ գործադրելով հեռավար դրութեամբ պարի եւ երգչախմբային յայտագիրներ, մասնաւորաբար ծնողներու համար:

Պատերազմի մասնակիցներու զաւակներուն հոգեկան վիճակը մեղմելու անհրաժեշտութենէն մեկնելով, 2021-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Նայիրի ճամբարը, որ կը գտնուի Հայաստանի Հանրապետութեան շրջանին մէջ, բացուեցաւ մասնաւորաբար 2020-ի Արցախեան պատերազմին զոհուած կամ հաշմանդամ դարձած զինուորականներու 200 երախաներու համար:

### Համացանցային Սփռումով Իրականացած Մշակութային Ծրագիրներ

Հ.Բ.Ը.Մ.ի Կատարողական Արուեստներու Բաժինը (2022-ին վերակոչուած Հ.Բ.Ը.Մ.ի Արուեստից) առցանց ծրագիրներով ընդլայնեց իր գեղարուեստական ծրագիրները, իրագործելով շարք մը յայտագիրներ, որոնք սատարեցին Նաեւ Հայաստանի եւ Արցախի մարդասիրական ծրագիրներու ի Նպաստ դրամահաւաքի կազմակերպումին: Նոյն ատեն, Հ.Բ.Ը.Մ.ի Հայորդեայց Պատանեկան Կեդրոնները առցանց միջոցառումներով աշխարհի տարբեր կողմեր գտնուող մանուկներու եւ պատանիներու համար գեղարուեստական յայտագիրներ եւ ձեռարուեստի դասընթացքներ ներկայացուցին:



Քոլոնի Տը Վաքանս

### Ընթացիկ Ծրագիրներու Առցանց Գործադրութիւն

Հ.Բ.Ը.Մ.-ի Համաշխարհային Առաջնորդական Ծրագիր-ը (Նախապէս ծանօթ որպէս Ասպարէզային Վարժողական Ծրագիր), Կորիզ Առաջնորդութեան Զարգացումի Ծրագիրը եւ Երաժշտական Հայաստան ծրագիրը, որոնք մասնակիցներու թիւի ընդգրկման առումով Հ.Բ.Ը.Մ.-ի ամենէն տարածուն ծրագիրներն են, 2020-2021 թուականներուն վերամշակուած ձեւով, արդիւնաւորութեամբ իրագործուեցան առցանց դրութեամբ:

### Երաժշտական Հայաստան Ծրագիր

2021-ին առցանց դրութեամբ աւելի լայն հասողականութիւնը օգնեց որ աւելի մեծ թիով եւ միջազգային տարողութեամբ 42 մասնակիցներ, որոնց շարքին ոչ-հայեր ութ երկիրներէ, իրենց մասնակցութիւնը բերեն յայտագրին, երեք շաբաթներու ընթացքին, վարպետական դասընթացքներով եւ կատարումներով:

### Համաշխարհային Առաջնորդական Ծրագիրը (ՀԱՄ)

2022ին Համաշխարհային Առաջնորդական Ծրագիրը խորհրդատուական Նոր ծրագրով մը, մասնակիցները համադրեց Երիտասարդ Արիեստավարժներու Խումբերու տարբեր եւ համապատասխան մարզերէ մասնագէտներու հետ: 16 երկիրներէ 63 մասնակիցներ, ինչպէս Արժանթին, Հայաստան Աստրիա, Պրագիլ, Պուկարիա, Գանատա, Ֆրանսա, Գերմանիա, Լիբանան, Սուրիա, Սպանիա, Շուէտ, Զուիցերիա, Թուրքիա, Միացեալ Թագաւորութիւն եւ Միացեալ Նահանգներ, վեց շաբթուան ընթացքին իրենց խորհրդատուներուն հետ անհատական հանդիպումներով օգտուեցան անոնց ճարտարապետական, առետրագիտական, տնտեսագիտական, ճարտարագիտական եւ միջազգային յարաբերութեանց մարզերու մասնագիտական փորձառութիւններէն: Աւելին, անոնք մասնակցեցան Նաեւ վարժողական ծրագիրներու, իրենց հետագայ արիեստագիտական հմտութիւնները զարգացնելու համար, Նաեւ առցանց խմբային հանդիպումներ ունեցան ընկերային, մշակութային եւ լեզուի դասընթացքներու տարբեր յայտագիրներով:

### ԿՈՐԻՋ Առաջնորդներու Պատրաստութեան Ծրագիր

Համավարակին պատճառով առցանց ձեւաչափով կազմակերպուած Կորիզի հանդիպումներուն իրենց մասնակցութիւնը բերին 41 երկիրներէ հարիւրաւոր երիտասարդ արիեստավարժներ, որոնք հանդիպեցան հայաշխարհի յայտնի մտաւորականներու հետ լսելով անոնց ելոյթները: Նոյն ծրագիրը շարունակուեցաւ Նաեւ 2021-ին, երոպական երկիրներէ մասնագէտներու մասնակցութեամբ՝ վեց մասերէ բաղկացած դասախօսական շարքով մը:





# Հ.Բ.Ը.Մ.ի Արտակարգ Իրավիճակի Մարդասիրական Նախաձեռնությունը Լիբանանի Մէջ

Պէյրուսի նաահանգիստի ահաւոր պայթումը, մօտակայ թաղամասերու մէջ ապրող հազարաւոր լիբանանահայերը աղիտահար դարձուց, քանդելով անոնց բնակարանները, ծանրօրէն վիրատուրելով շատերը եւ տակնուվրայ ընելով անոնց արդէն իսկ տնտեսապէս անկայուն կեանքի բնականոն ընթացքը: Հ.Բ.Ը.Մ.ը աղէտի առաջին իսկ ժամերուն գետնի վրայ էր, սկստակական եւ երիտասարդական կազմակերպութիւններու իր բազմահարիւր կամաւորներով, որոնք երկրի տարբեր կողմերէն օգնութեան հասնող այլ կազմակերպութիւններու կողքին ոգի ի բռին գործի լծուած էին բուժօգնութիւն հասցնելով վիրատուրեալներուն, մասնակցելով ճամբաները փշրուած ապակիներէ եւ վտանգաւոր նիւթերէ մաքրելու աշխատանքներուն, կամաւորներուն եւ կարիքաւոր դարձած ընտանիքներուն սննդանիւթ ապահովելու ճիգերուն, քանդուած բնակավայրերու եւ գործատեղիներու պարագային ցանկագրելով եւ վերաշինութեան համապատասխան ծրագիրներ մշակելով եւ գործադրելով:

Դպրոցական աշխատանքները առցանց դարձան, Հ.Բ.Ը.Մ.ի վարժարաններու եւ գրասենեակներու գործունէութիւնները ղեկավարուեցան հեռավար ձեւով, մինչ Միութեան դարմանատունները շարունակեցին գործել ամենօրեայ դրութեամբ, հասնելով ժողովուրդի առողջապահական կարիքներուն:

Լիբանանի մէջ արտակարգ դրութեան դիմագրաւումին ուղղուած Միութեան աշխատանքները կեդրոնացան չորս գլխաւոր ուղղութիւններու վրայ:



Վերաշինութիւն



Սննդեղէնի բաշխում



Կրթաթոշակներու առկայում



Հոգեբանական-Ընկերային խորհրդատուական Ծառայութիւն



Հագուստեղէն

## Համապատկեր Օգնութեան աշխատանքներուն մինչեւ 2021

- 862 բնակարանային վնասներու արժեւորում
- 367 բնակարաններու վերաշինութիւն
- 18,000 տաք ճաշի բաշխում
- 1,200 սննդեղէնի ծրարներու բաշխում Ամսական դրութեամբ
- 100% առկայում Հ.Բ.Ը.Մ.ի դպրոցներու կրթաթոշակներու
- 358 պատանիներու եւ երիտասարդներու անվճար հոգեբանական-ընկերային աջակցութիւն
- 539 անհատներու տրամադրուած հագուստեղէն

Այս ծառայութիւններէն շատերը շարունակուեցան 2021-էն անդին եւս, նկատի ունենալով երկրին մէջ պետական կառոյցներու անարդիւնաւորութեան, տնտեսութեան եւ դրամատուններու սուր տագնապին, անգործութեան եւ համատարած չքաւորութեան տիրող ծանր պայմանները:

## Վերաշինություն

Պէյրուի Նաահանգիստի պայթումին յաջորդող օրերուն եւ շաբաթներուն ընթացքին, *Յ.Բ.Ը.Ս.ի Աղէտի Մարմին*-ի Յանձնախումբը ձեռնարկեց վնասներու սերտողութեան եւ ցանկագրումի հետեւողական ծանր աշխատանքին, որպէսզի կարելի ըլլար ապահովել անհրաժեշտ միջոցառումները որոնք պիտի ապահովէին աղիտեալ անձերու եւ ընտանիքներու վերադարձը իրենց բնակավայրերը:

Իրականացուած օգնութիւնները կ'ընդգրկէին պատուհաններու, դուռերու, խողովակներու նորոգութիւն, նաեւ փճացած լուացքի մեքենաներու, սառնարաններու եւ կահոյքի փոխարինում: Օգնութեան աշխատանքները կ'ետրոնացած էին պայթումին անմիջական շրջակայքին մէջ գտնուող եւ առաւելագոյն վնասուած բնակավայրերուն՝ *Ճըմէյգիի, Մար Սիսայէի, Էշրէֆիէի, Խալիլ Պատաուիի եւ Քարանթինայի* թաղամասերուն մէջ:



### 1 Ուսեստեղէնի Բաշխում


Տնտեսական տագնապը, որ պայթումին պատճառած աղիտալի հետեւանքներով ծանրագոյն աստիճանի հասած էր երկրէն ներս, դրսեւորուեցաւ տղանով եւ կենցաղային խնդիրներով, յատկապէս տարրական սննդանիւթերու, վառելանիւթի եւ դեղորայքի չգոյութեամբ: *Յ.Բ.Ը.Ս.*ը ձեռնարկեց ուսեստեղէնի ծրարներու պատրաստութեան եւ բաշխումին, որոնք չորս անդամներէ բաղկացած ընտանիքի մը քառասուն օրուան սննդանիւթի կարիքները կը բաւարարէին: Միութեան շրջանակէն ճաշարանատէր Ալին Գամագեանի Նախաձեռնութեամբ եւ *Ուրլուտ Աէնթըրըլ Քիչընի* հետ գործակցութեամբ իրականացաւ տաք ճաշերու մատակարարումի դրութիւնը, որ երկու հանգրուաններով գործադրուեցաւ 2021-ի ընթացքին:

### Առաջին Հանգրուան (2020)

- 15 կամուրներ
- 4,400 տաք ճաշերու պատրաստութիւն
- 700 տաք ճաշերու բաշխում շաբաթական դրութեամբ

### Երկրորդ Հանգրուան (2021)

- 15 կամուրներ
- 4,400 տաք ճաշերու պատրաստութիւն
- 700 տաք ճաշերու բաշխում շաբաթական դրութեամբ



## Կրթաթոշակներու Առկախում

Լիբանանեան կրթական դրութեան մէջ առաջինը ըլլալով, *Յ.Բ.Ը.Ս.*ը հարիւր տոկոսով առկախեց 2020-2021 տարեշրջանի իր դպրոցներու 294 աշակերտներու կրթաթոշակները:



### 2 Հոգեբանական-Ընկերային Խորհրդատուական Ծառայութիւն

Նաահանգիստի պայթումէն ազդուած ընտանիքներու համար, որոնք հոգեկան ճնշումի ազդեցութեան տակ կը գտնուէին, հոգեբանական խորհրդատուութիւն ապահովուեցաւ: Մասնագիտական աջակցութիւն տրամադրուեցաւ պատանիներու եւ երիտասարդներու հոգեբանական խնդիրներու արժեւորումին համար, իրենց կարիքներուն համապատասխան յաւելեալ անհրաժեշտ դարմանումներ ապահովելու նպատակով:

### 3 Հագուատներու Ապահովում

*Յ.Բ.Ը.Ս.*ը հագուատահաւաքի ձեռնարկեց 2020-ի Դեկտեմբերին, որուն իրենց մասնակցութիւնը բերին Լիբանանի ինչպէս նաեւ համընդհանուր միութեան անդամակցութիւնը: Բոլոր անոնք որոնք հագուատի կարիք ունէին, կրցան նպաստատուրուիլ 4497 կտոր տրամադրելի հագուատեղէնէ, ըստ իրենց կարիքներուն:





## Հ.Բ.Ը.Մ.ի Նախաձեռնությամբ Աղետեալներու Օգնութիւն Հայաստանի եւ Արցախի Մէջ

2020-ի Արցախեան Պատերազմի ընթացքին եւ անկէ ետք, Հ.Բ.Ը.Մ.ը շարունակեց օժանդակութիւն ընձեռել բոլոր այն տեղահանուածներուն, որոնք որոշած էին մնալ Հայաստանի մէջ, հեռացած ըլլալով իրենց պապենական հողերէն: Շատեր նախընտրեցին վերադառնալ եւ հաստատուիլ Ստեփանակերտի մէջ որ կը գտնուէր Ռուսական խաղաղապահ ուժերու հսկողութեան տակ, որպէս արդիւնք Ռուսիոյ նախաձեռնութեամբ Ազրայէյճանի, Ռուսիոյ եւ Հայաստանի միջեւ կնքուած համաձայնագրին: Շատ մը ընտանիքներ, իրենց նոր բնակարաններուն մէջ անհրաժեշտ իրերու պակաս ունէին: Հ.Բ.Ը.Մ.ը նախաձեռնեց այդ իրերու ապահովումին եւ անվճար տրամադրումին, օգնելու համար տեղահանուած ընտանիքներուն որ իրենց կեանքերը վերսկսին նոր միջավայրի մէջ:

- Մարդասիրական օգնութիւն տրամադրուեցաւ **100,000** անձերու եւ **22,400** ընտանիքներու
- Ուտելիքի ծրարներ/տաք ճաշեր բաշխուեցան **աւելի քան 54,000** անձերու
- Անհրաժեշտ իրեր եւ առողջապահական ծրարներ բաշխուեցան **աւելի քան 52,000** անձերու
- Ձմեռնային տաք հագուստներ տրամադրուեցան **աւելի քան 6,400** անձերու
- Բուրդ ծածկոցներ եւ անկողիններ տրամադրուեցան **աւելի քան 5,600** անձերու
- Շարժական վառարաններ, էլեկտրականութիւն արտադրող շարժակներ եւ մարտկոցներ տրամադրուեցան **աւելի քան 600** անձերու
- Էլեկտրականութիւն արտադրող շարժակներ եւ մարտկոցներ տրամադրուեցան **աւելի քան 40** ապաստանարաններու

### 4 Բժշկական Կազմածներ

- Ուլըրտ Ֆուտ Փրոկրամ Համաշխարհային Սնունդի Ծրագրին նիւթական օժանդակութեամբ, **42** թօն անհրաժեշտ դեղորայք եւ բժշկական կազմածներ ձեռք բերուեցան եւ ծրարուեցան Հ.Բ.Ը.Մ.ի երրորդայի շրջանակին կողմէ, Պելճիքայի մէջ:
- Քալիֆորնիոյ Լոս Անճելըսի Համալսարանի *Տէյվիտ Կէֆըն* Բժշկական բաժնին միջոցաւ թթուածին արտադրող **2** գործիքներ տրամադրուեցան:
- **40** թթուածինի օդափոխիչներ տրամադրուեցան Հայաստանի գլխաւոր հիւանդանոցներու, **1,300** դարմանուողներու գործածութեան համար:
- Արցախի Արեւիկ մանկական հիւանդանոցին տրամադրուեցաւ ճառագայթային ախտորոշման *Րաֆայէլ Տի Ար* վաճառանիշի նոր կազմած մը:





AGBU Camp Nairi

### Պատերազմի Մանուկներու Աջակցութիւն

- Պատերազմի պատճառով կարիքաւոր դարձած հազարաւոր մանուկներ տր հագուստներ, խաղալիքներ եւ գիրքեր ստացան
- Տասնեակներով զբօսանքային ծրագիրներ, տիկնիկային թատրոն, համերգներ եւ համայնքային հաւաքոյթներ կազմակերպուեցան
- 2021-ին պատերազմին զոհեր ունեցած ընտանիքներու 200 մանուկներ մասնակցեցան Զ.Բ.Ը.Մ.ի կազմակերպած *Նայիրի ճամբար*-ին, երկու շաբաթ տեւողութեամբ, անվճար:

### Վերաբնակեցում եւ Շարունակական Աջակցութիւն

- Խոհանոցային տր կազմածներ տրամադրուեցան **120** ընտանիքներու
- Ստեփանակերտի մէջ ծանօթէն վնասուած մանկապարտէզ մը տրոգուեցաւ
- Զոհուած կամ հաշմանդամ զինծառայողներու ընտանիքներուն դրամական օժանդակութիւն տրամադրուեցաւ
- Յատուկ փոքր գործարարական դրամաշնորհներ տրամադրուեցան Զ.Բ.Ը.Մ.ի Արցախի *Սովորի որ Շահիս* եւ *Կին Գործարարներ* ծրագիրներու մասնակիցներուն, որոնք վերաբնակեցուած էին Յայաստանի մէջ:



## Միջազգային Մամուլի Իրազեկում

Հակադարձելու համար Ազրայեյճանի կողմէ Հայաստանի դէմ տարածուող ապատեղեկատուութեան, Հ.Բ.Ը.Մ.ը լուրջ քայլերու ձեռնարկեց համաշխարհային հանրային կարծիքը լուսաբանելու ուղղութեամբ:

### 1 Հ.Բ.Ը.Մ. երիւ Օտար Դիտորդներու Ծրագիր

2020-ին, երբ պատերազմը Արցախի մէջ դեռ կը շարունակուէր, Հ.Բ.Ը.Մ.ի երուպայի շրջանակը կազմակերպեց 15 երկիրներէ կամուր լրագրողներու, քաղաքական գործիչներու, եւ լրատուական մարզի արհեստավարժներու խումբի մը այցելութիւնը Արցախ, տեղւոյն վրայ արժեւորելու համար իրադրութիւնը: Նախաձեռնութեան նպատակն էր, որ խումբի անդամները իրենց ականատեսի վկայութիւններով հակազդէին այն ապատեղեկատուական եւ խեղաթիրուած լրահոսերուն, որոնք ողողած էին հրապարակը: Առաջին այցին անմիջապէս յաջորդեց երկրորդ մը, որ կ'ընգրկէր նաեւ խորհրդարանական անդամներ եւ հանրայայտ անձնատուութիւններ:



### 2 Հ.Բ.Ը.Մ.ի Նախաձեռնութեամբ Տեղական Լրագրողներու Մարզում

Հ.Բ.Ը.Մ.ի Մատրիտի (Սպանիա) Երիտասարդ Արհեստավարժները նախաձեռնեցին մէկ-շաբաթեայ աշխատանքային ծրագրի մը, հայ տեղացի լրագրողներու համար: Օտար արհեստավարժ եւ յայտնի լրագրողներ եւ նկարիչներ, սիրայօժար մասնակցեցան ծրագրին, բաժնետվով իրենց փորձառութիւնը, աննախապաշար, ազգայնական-զգացական տրամադրութիւններէ զերծ լրատուութիւն իրականացնելու եւ լրատուական օտար գլխաւոր ցանցերու հետ համակրական կապեր ստեղծելու միջոցներուն մասին:

### Հ.Բ.Ը.Մ.ի Կողմէ Արցախի Վերաբերեալ չետագոտական Դրամաշնորհներ

Նկատի ունենալով ռազմավարական տեղեկագրութեան համար հիմնաւորուած տեղեկութիւններու անհրաժեշտութիւնը, լրատուութեան, մարդասիրական կազմակերպութիւններու, քաղաքականութեան մշակումի եւ հանրութեան համար ընդհանրապէս, Հ.Բ.Ը.Մ.ը 2021-ին 100,000 տոլար ընդհանուր գումարով դրամաշնորհներ տրամադրեց Արցախի մասին ժամանակակից հետազոտութիւններ իրականացնելու համար:

### Հ.Բ.Ը.Մ.ի Կողմէ Ժառանգութեան Պահպանումի Արշաւ

Ս. Էջմիածինի հովանաւորութեամբ եւ Գիտնականներու եւ Երկրաբաններու գործակցութեամբ, Հ.Բ.Ը.Մ.ը իրազեկման արշաւ կազմակերպեց ընկերային ցանցերու եւ հանրային շրջանակներու ուղղուած, ահագանգելով Արցախի բնիկ հայութեան մշակութային հարստութիւններու պահպանումի անհրաժեշտութեան վերաբերեալ, որոնց մաս կը կազմեն հին քրիստոնէական եւ եւ այլ ճարտարապետական կոթողներ:

[www.agbu.org/artsakh-heritage](http://www.agbu.org/artsakh-heritage)



### Հ.Բ.Ը.Մ.ի Կողմէ Արցախի Համար Իրազեկման Թուայնական Նախաձեռնութիւն

Պատերազմի մեկնարկէն միայն քանի մը շաբաթ անց, յստակ դարձաւ որ Հայաստան հանրային կարծիք ձեւաւորելու ռազմավարութեան մէջ յաջողութիւն չէր արձանագրեր: Հ.Բ.Ը.Մ.ը ստեղծեց նիւթերու ցանցային շտեմարան մը, ուր կը տեղադրուէին հայկական կողմին ի նպաստ հաւաստի աղբիւրներէ քաղուած նիւթեր: Ակադեմականներ, գործիչներ, Արցախի դատին համակիրներ եւ բարեկամներ, կրնային անվճար օգտագործել տրամադրուած նիւթերը, նաեւ ստանալ ել-նամակով լուրերու ամփոփումներ եւ գործողութիւններ կատարելու կոչեր, որոնք կը համակարգուէին Հայաստանէն եւ սփիւռքէն առաջնորդներու խումբի մը կողմէ [www.agbu.org/artsakh-facts](http://www.agbu.org/artsakh-facts)

### 3 Արբանեակային չետագոտական Աջակցութիւն

Հ.Բ.Ը.Մ.ի կողմէ տրամադրուած նիւթական օժանդակութեամբ, կարելի եղաւ ապահովել Կովկասի Ժառանգութեան Հսկողութիւն (Caucasus Heritage Watch – CHW) կազմակերպութեան աջակցութիւնը: Այս կազմակերպութեան մաս կազմող երկրաբաններ, Քորնէլ եւ Փրորտու համալսարաններէն, արբանեակային նկարչութեան միջոցաւ, փաստաւիտաբար կատարած էին Ազէրի տիրապետութեան տակ գտնուող հարիւրաւոր հայկական վայրերու եւ անոնց կացութեան վերաբերեալ, որոնք հասանելի չէն մշակութային ժառանգի պաշտպան շրջանակներու: Այդ նիւթերը ներկայացուցան Միջազգային Արդարութեան Դատարանին, հիմնաւորելու համար Ազէրի բռնարարքներու կապակցութեամբ հայկական կողմի ներկայացուցած բողոքը:

### Հ.Բ.Ը.Մ.ի Նախաձեռնութեամբ` Ծջմարիտ Վկայութիւններ

Հ.Բ.Ը.Մ.ը նախաձեռնեց Արցախեան Պատերազմին հայաստան ապաստանած եւ յարձակման ու տեղահանութեան արհաւիրքներուն ականատես եղած անձերու վկայութիւններուն ֆիլմագրութիւնը: Արցախի տարբեր կողմերէն տեղահանուած անձերու հետ կատարուած այս հարցազրոյցները, օգնեցին ամբողջական դարձնելու կատարուած անմարդկային արարքներու զգացողութիւնը, նպաստելով նաեւ պատերազմական յանցագործութիւններու փաստագրումին: [www.agbu.org/voicesoftruth](http://www.agbu.org/voicesoftruth)





## Հ.Բ.Ը.Մ.ի Համաշխարհային Ցանցի Մասնակցութիւնը Օգնութեան Գործին

Մինչ Արցախի պատերազմը կը սաստկանար, Հ.Բ.Ը.Մ.ի շրջանակները, մասնաճիւղերը եւ գրասենեակները աշխարհի տարածքին, տեղական նախաձեռնութիւններով եւ դրամահաւաքի իւրայատուկ միջոցառումներով, իրենց մասնակցութիւնը բերին Կեդրոնի օգնութեան աշխատանքներուն: Հաւաքուած գումարներէն մաս մը ուղղակիօրէն տրամադրուեցաւ Կեդրոնի ղեկավարած օգնութեան գործին, իսկ մաս մը, Հ.Բ.Ը.Մ.ի հովանաւորութեամբ փոխանցուեցաւ Հայաստան Համահայկական Հիմնադրամին:

**Նիւ Եորքի մէջ գործող Հ.Բ.Ը.Մ. Արուեստից-ը**, համացանցային գեղարուեստական համոյթներով, որոնք համաշխարհային հասողութիւն ունէին, հանգանակութիւններ իրականացուց, աջակցելու համար մարդասիրական ծառայութեան ծրագիրներու, Հայաստան Համահայկական Հիմնադրամին Միջոցաւ: Ասոնց մաս կը կազմէին *Արցախի համար համոյթ-ը* եւ *Համոյթ խաղաղութեան Համար-ը*:

**Հ.Բ.Ը.Մ. Սոֆիա եւ Հ.Բ.Ը.Մ. Միլան** հանրութիւնը իրազեկեցին եւ հանգանակութիւն կատարեցին *Մենք Հայ ենք Ելոյթներու Շարք-ով* մը Հ.Բ.Ը.Մ. Սոֆիայի Սենեկային նուագախումբին կատարողութեամբ, իսկ Հ.Բ.Ը.Մ. Միլանը Իտալական երկու կազմակերպութիւններու հետ գործակցութեամբ, հայ մշակութային ժառանգութեան ընտրանի յայտագիր մը ներկայացուց հանրութեան:

**1 Հ.Բ.Ը.Մ.ի Թորոնթօ-ի** շրջանակը դրամահաւաք մը կազմակերպեց *Հ.Բ.Ը.Մ. Ֆրանս Ժէօնի* եւ Հայաստանի Հ.Բ.Ը.Մ.ին համար, 1000 տեղահանուած մանուկներու ի նպաստ Նոր Տարուան նուէրներ, ձմեռնային իրեր, խաղալիքներ եւ գիրքեր ապահովելու նպատակով:

**2 Հ.Բ.Ը.Մ.ի Փարիզ-ի** շրջանակը ձմեռնային հագուստներ հաւաքեց, Արմաիրի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի եւ Սիւնիքի շրջաններուն մէջ բաժնելու համար: *Ապրելու Երկիր* կազմակերպութիւնը Կորիս մեկնեցաւ ուտելիք, առողջապահական իրեր եւ անմիջական դարմանումի անհրաժեշտ միջոցներ տրամադրելու համար տեղահանուած ընտանիքներու:

**3 Հ.Բ.Ը.Մ.ի Փլովտի-ի** շրջանակը բացօդայ տօնավաճառ մը կազմակերպեց, հանրութիւնը իրազեկելու եւ միաժամանակ Արցախի համար դրամահաւաք կատարելու համար: Նոյնապիսի նախաձեռնութիւններ իրականացուցին Վառնայի, Հասքովոյի, Պուրկասի, Ռուսոյի եւ Տոպրիչի շրջանակները:

**Հ.Բ.Ը.Մ.ի Սաու Փաուլօ-ի** շրջանակը հանրութիւնը իրազեկեց առաջ տարուող համընդհանուր օգնութեան աշխատանքներուն մասին: Ուրուկոյէի Հ.Բ.Ը.Մ.-ը եւ մասնաճիւղին Երեւան 50 Սկաուտական խումբի, ինչպէս նաեւ Պուէնոս Այրէսի Հ.Բ.Ը.Մ.-ը եւ տեղույն Չօր. Անդրանիկ սկաուտական խումբի անդամները հայկական ասանդական ուտեստեղէն կը վաճառէին եւ մեքենաներ կը լուային Արցախի օգնութեան ի նպաստ դրամական միջոցներ ապահովելու:

**Հ.Բ.Ը.Մ.ի Երեւանի սկաուտական խումբը եւ Արաբկիրի Հայորդեայ Կեդրոնը** հագուստեղէն եւ ուտելիք ապահովեցին եւ ձեռնարկներ կազմակերպեցին տեղահանուած ընտանիքներու մանուկներուն համար:

**4 Հ.Բ.Ը.Մ.ի Մատրիտի, Երեւանի եւ Հիւսիսային Քալիֆօրնիոյ Երիտասարդ Արհեստավարժները** հանգանակութիւնները կրկնապատկելու նախաձեռնութիւն մը կատարեցին իրենց շարքերէն սկսելով եւ հասնելով Միութեան համաշխարհային ցանցին:

**5 Հ.Բ.Ը.Մ.ի Սան Ֆերնանտոյի Սկաուտները** Համավարակի ընթացքին հիանդանոցներու գեր-բեռնաւորութիւնը նկատի ունենալով, դրամահաւաք կազմակերպեցին եւ ուտելիք հասցուցին տեղական հիանդանոցներու աշխատողներուն:

**Հ.Բ.Ը.Մ.ի Փասատենայի Սկաուտները**, Սկաուտական եւ *Բուրաստան* յանձնախումբերու ղեկավարութեամբ, իւրայատուկ ձեռնարկներով դրամահաւաք իրականացուցին եւ Ելեկտրական ջեռուցիչներ եւ հագուստեղէն ապահովեցին Շուշիէն տեղահանուած ընտանիքներու համար: Նոյնապիսի նախաձեռնութիւններով մասնակցութիւն բերին **Հ.Բ.Ը.Մ.ի Ասպետները եւ Մանուկեան-Տէմիրճեան Դպրոցի աշակերտութիւնը**:

**6 Հ.Բ.Ը.Մ.ի Վալանսի** Երիտասարդ Կամաւորներ Ստեփանակերտ մեկնեցան, ուտեստեղէնի ծրարներ, ջեռուցիչներ եւ բուրդ ծածկոցներ բաժնելու համար 1600-է աւելի տեղահանուածներու:

**Հ.Բ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի Երիտասարդ Արհեստավարժները** Ամառնային իրենց երկրորդ հաւաքոյթի հասոյթով մասնակցեցան Հայաստանի եւ Արցախի ի նպաստ Հ.Բ.Ը.Մ.ի Համընդհանուր Օգնութեան նախաձեռնութեան:

**Թորոնթոյի Երիտասարդ Արհեստավարժները** *Շննդեան Տասներկու Օրեր* առցանց տօնավաճառի ձեռնարկով մը 10,000 տոլար հանգանակեցին զայն տրամադրելով *Երիտասարդ Արհեստավարժները Գիտակից են* նախաձեռնութեան:



## Տագնապի Ազդեցութիւններէն Բուժուած եւ Առաւել Կոփուած Դուրս Գալու տրամադրութեամբ

**Հ.Բ.Ը.Մ. Կրթութիւն** յատուկ նախաձեռնութիւնը, առցանց հանդիպումներու շարք մը կազմակերպեց *Արցախի Պատերազմը եւ Ես – Ներհոգեկան Տագնապումներ* խորագրով, որուն իրենց մասնակցութիւնը բերին հոգեբաններ եւ հոգեբուժական մարզի մասնագէտներ, քննարկելով հակազդումներ, խորհրդածութիւններ եւ տագնապներու դիմաց դիմադրականութիւնը զօրացնելու միջոցներ եւ ցուցմունքներ: Նախաձեռնութիւնը ունեցաւ 850 մասնակիցներ եւ հետագայ աւելի քան 30,000 դիտումներ:

Երկրորդ նախաձեռնութեամբ մը, Հ.Բ.Ը.Մ.ը Հայկական Հեռավար Համալսարանին, Հայաստանի Ամերիկեան Համալսարանին եւ Հայկական Մտային Առողջապահութեան Կազմակերպութեան համագործակցութեամբ, *Տոկոսութեան Գագաթնաժողով – Դժուար Ժամանակներու Դիմագրաւում* խորագրով խորհրդաժողով մը կազմակերպեց հոգեմտաւոր տագնապի մատնուած համայնքներուն օժանդակելու նպատակով: 26 երկիրներէ շուրջ 200 մասնակիցներ օգտուեցան այս նախաձեռնութենէն:





## ԾԱՌԱՅԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԻՒՆ



Հ.Բ.Ը.Մ. Հայեր Կը Միանան Շարժման մասնակիցները մարդասիրական օգնության տրամադրման ընթացքին, Հայաստան, 2021

Երբ համավարակը ծալալեցաւ աշխարհի տարածքին, Հ.Բ.Ը.Մ.ի բոլոր մասնաբաժինները պատրաստակամութիւն ցուցաբերեցին տարբեր ձեւերով ծառայելու եւ օգտակար հանդիսանալու իրենց համայնքներուն:

Երբ կարիքը կը ներկայանար, մեծ թիւով կամաւորներ իրենց կարողութիւնները ի գործ կը դնէին Ծրագրի մը կամ Նախաձեռնութեան մը յաջողութեան:

Պէյրութի Նաահանգիստի պայթումին եւ Արցախեան Պատերազմի հետեանքներու դիմագրաւումին համար ստեղծուած յատուկ յանձնախումբերու աշխատանքները Միութեան Զամընդհանուր Օգնութեան Ծրագրի հովանիին տակ, Նոր եւ երկարաժամկէտ Նախաձեռնութիւններու ծնունդ տուին:

Հ.Բ.Ը.Մ.-ի բազմաթիւ կամաւորներ, աշխարհասփիւռ մեր գաղութներէն, 2020-ի Արցախեան պատերազմին եւ անկէ վերջ դէպի հայոց հայրենիք մեկնեցան՝ պատերազմի ճիրաններուն մէջ յայտնուած եւ տեղահան եղած անմեղ խաղաղ բնակիչներուն օգնութեան հասնելու եւ անոնց ապահովութեան զգացում մը պարգեւելու համար: Անոնք այսպիսով միասնականութեան եւ զօրակցութեան ոգի ցոյց կու տային:



1

## Կամաւորական նոր Նախաձեռնութիւններ 2020-2021-ին

Պէյրուօի Նաւահանգիստի պայթումին եւ Արցախեան Պատերազմի հետեան քննարկողներու դիմագրաւումին համար ստեղծուած յատուկ յանձնախումբերու աշխատանքները Միութեան Համընդհանուր Օգնութեան Ծրագրի հովանիին տակ, նոր եւ երկարաժամկէտ նախաձեռնութիւններու ծնունդ տուին:

### 2 Ն.Բ.Ը.Մ.ի Լիբանանի Աղէտի Միաւոր

Այն ինչ սկսաւ որպէս բարեկամեցողութեան եւ իրերօգնութեան ազնիւ տրամադրութիւններու դրսեւորում, Լիբանանի աղէտին իբր անմիջական հակազդեցութիւն, ժամանակի ընթացքին ուռճացաւ, եւ վերածուեցաւ մնայուն ծրագրի, տիրող տնտեսական տագնապին, կենցաղային կարիքներուն եւ կառավարական տարրական ծառայութիւններու բացակայութեան պատճառով: *Ն.Բ.Ը.Մ.ի Լիբանանի Աղէտի Միաւոր*-ը իր գործունէութեան դաշտը ընդարձակեց, ընդգրկելով տարբեր տեսակի ընկերային ծառայութիւններ, հասնելու համար համայնքի կարիքներուն:

### 1 Նայեր Կը Միանան Շարժում

44-օրեայ պատերազմի առաջին իսկ շաբաթներուն, Միութեան Ֆրանսայի շրջանակը, կամաւորներու խումբերու յաջորդական այցեր կազմակերպեց օժանդակելու համար տեղւոյն Յ.Բ.Ը.Մ.ի օգնութեան աշխատանքներուն գլխաւորաբար աղէտակէտներուն տրամադրելով կենցաղային անհրաժեշտ օգնութիւն:

Պատերազմէն ետք տեղահանեալներէն շատերուն համար կացութիւնը ծանր էր: 2021-ին, Ֆրանսայի շրջանակը ձեռնարկեց կազմակերպչական միջոցառումի մը, որով կամաւորներու խումբեր կրնային ճամբորդել Հայաստան եւ աջակցիլ տեղւոյն օգնութեան աշխատանքներուն: 2021-ի Ապրիլ, Յունիս եւ Օգոստոս ամիսներուն, այս ծրագրով



2

երեք խումբեր այցելեցին Հայաստանի տարբեր շրջաններ, մարդասիրական օգնության կողքին կազմակերպելով նաև յայտագիրներ մարզական, մշակութային և ընկերային բնույթով յատկապես այն ընտանիքներուն համար որոնք կը շարունակէին ժամանակաւոր դրութեամբ մնալ Վահէ Կարապետեան Կեդրոնին մէջ: Ընդարձակելով այս ծրագրի ընդգրկողականութիւնը, այժմ անոր կրնան մասնակցիլ աշխարհի բոլոր կողմերէն կամաւորներ:

### 3 Հայաստան Ապրելու Երկիր

Հակառակ Արցախեան Պատերազմէն ետք սահմանային լարուած իրադրութեան, Ֆրանսայի Հայաստան Ապրելու Երկիր շարժումի 33 կամաւորներ, ճամբորդեցին Տաւուշի շրջանի Սարիգիղ համայնք, ուր վերանորոգեցին դպրոցաշէնք մը և փոխանցեցին ակռաներու առողջապահութեան առնչուող գիտելիքներ:

## Առցանց Կամաւորական Նախաձեռնութիւններ

### Ն.Բ.Ը.Մ.ի Գործարարական Խորհրդատուութիւն

2021-ին, գործադրուեցաւ գործարարական խորհրդատուութեան առցանց ծրագիրը, որ կարելի կը դարձնէր սփիւռքէն գործարարական մարզի փորձագէտներու խորհրդատուական աջակցութիւն ընձեռել Հայաստանի և Արցախի մէջ Կանանց Հզօրացման ծրագրի մասնակից կին գործարարներու: Կանանց Հզօրացման ծրագրին նպատակն է կիներու նախաձեռնողական կարողութիւնները զարգացնել, գիրենք անկախ և ինքնաբաւ դարձնելու համար: 2021-ի աւարտին, արդէն 200 անձեր մասնակցած էին այս ծրագրին, առցանց կամ դէմ առ դէմ հանդիպումներով:



### 4 Անի Խօսակցական Վարժութեան Ծրագիր

Այս ծրագիրը որ սկսած էր որպէս պատանիներու անգլերէնի խօսելավարժութիւնը քաջալերելու միջոց, 2021-ին տրամադրելի դարձաւ նաև անոնց, որոնք գործարարական նպատակներով իրենց անգլերէնը բարելաւելու փափաք ունէին, կամ երկրորդականի աշակերտներու որոնք անգլիախօս համալսարաններ կը դիմէին: Այս ծրագրին իրենց մասնակցութիւնը կը բերէին կամաւորներ, որոնք հաղորդակցութեան մէջ կը դրուէին համապատասխան մասնակցողներու հետ, յատուկ նախապատրաստական աշխատանքէ ետք:





## Ողջոյն Ն.Բ.Ը.Մ.ի Սկաւաւներուն Աշխարհի Տարածքին

2020 եւ 2021 տարիները դէպքերու բերումով հասունացումի մղեցին սկաւաւական շարքերը: Ստեղծուած պայմանները եւ տարբեր տեսակի կարիքներու հասնելու անհրաժեշտութիւնը ի յայտ բերին սկաւաւական ոգիի եւ պատրաստուածութեան առաւելութիւնները, որոնք սկաւաւները իրենց սկաւաւական ուխտին հաւատարիմ՝ պատուով եւ գերազանցօրէն ցուցաբերեցին, բարձր գնահատանքի արժանանալով (ՏԵՄ էջ 64):









## ՍԵՌԵՐՈՒ ՄԻՋԵԻ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԵԱՆ ՍԱՏԱՐՈՂ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ

